

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵՐՁԵՅ ՄԵՂՐՅԱՆ

**ՆԱՅՑԻ  
ԱՊԱՆՈՎՈՒՄԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



ՎՐԱՏԱՐԱՎՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2020  
publishing.ysu.am

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ**

**ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(դասախոսություն)**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2020**

ՀՏԴ 347(042.4)

ԳՄԴ 67.404g7

Մ 586

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

**Մեղրյան Ս. Գ.** – իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ

***Մեղրյան Սերգեյ Գուրգենի***

Մ 586 Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն): -Եր.: ԵՊՀ հրատ., 2020, 40 էջ:

Դասախոսության տեքստի շրջանակում լուսաբանվում է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված հայցի ապահովման ինստիտուտը:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, փաստաբանների, դատավորների և դատական ծառայողների, ինչպես նաև քաղաքացիական դատավարության հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 347(042.4)

ԳՄԴ 67.404g7

ISBN 978-5-8084-2438-8

© ԵՊՀ հրատ., 2020

© Մեղրյան Ս. Գ., 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- §1. Հայցի ապահովման հասկացությունը, նշանակությունը և դատավարական կարգը..... 4
- §2. Հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության դատավարական միջոցները .....22
- §3. Հայցի նախնական ապահովումը .....32

## **§1. Հայցի ապահովման հասկացությունը, նշանակությունը և դատավարական կարգը**

Սահմանադրությունը ոչ միայն երաշխավորում է խախտված կամ վիճարկվող իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջով դատարան դիմելու, դատական պաշտպանություն հայցելու անձի հնարավորությունը, այլ նաև ամրագրում է հրամայական պահանջ, որ դատական պաշտպանության իրավունքը պետք է լինի արդյունավետ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը կլիներ անիրական, իսկ դատական պաշտպանության ընթացակարգը՝ անարդյունավետ, եթե ներպետական օրենսդրությունը թույլ տար վերջնական և պարտադիր բնույթ ունեցող դատական ակտերին մնալ չկատարված՝ ի վնաս մի կողմի: Ըստ Եվրոպական դատարանի՝ եթե պետությունը չի երաշխավորում վերջնական դատական ակտերի ի կատար ածումը, դա հանգեցնում է այնպիսի իրողության, որն անհամատեղելի է իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան երաշխավորելիս: Մեկնաբանելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, որ արդար դատաքննության իրավունքն իր մեջ ներառում է ոչ միայն վեճն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու, այլ նաև կայացված դատական ակտը կատարելուն ուղղված գործուն և արդյունավետ կառուցակարգեր կիրառելու անհրաժեշտություն<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 01.03.2010 թվականի վճիռը, կետ 66, Բուրդուլն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դա-

Այդպիսի կառուցակարգերից է հայցի ապահովման ինստիտուտը: Վճռաբեկ դատարանի բնորոշմամբ այն հանդես է գալիս որպես օրենսդրությամբ նախատեսված<sup>1</sup> անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներից մեկը, որով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը: Քննարկվող դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Դրանով իսկ այն ուղղված է անձանց խախտված իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն<sup>2</sup>:

Հայցի ապահովման ինստիտուտին է նվիրված է Օրենսգրքի 13-րդ գլուխը (հհ. 128-138):

Դատավարագիտության մեջ **հայցի ապահովումը դիտարկվում է որպես դատարանի կողմից կատարվող դատավարական գործողություն, որը հետապնդում է գործով կայացվելիք վճռի կատարման երաշխիքներ ապահովելու նպատակ:** Միննույն ժամանակ հայցի ապահովումը դատական պաշտպանության դիմած անձանց իրավունքների պաշտպանության նախնական ձև է, քանի որ դատարանի որոշմամբ կիրառվող պաշտպանական միջոցները, որոնք դատավարագիտության մեջ կոչվում են հայցի ապահովման միջոցներ, հանդես են գալիս որպես վիճելի իրավահարաբերության կամ դրա հետ սերտորեն կապված այլ իրավահարաբերությունների մասնակիցների վրա նյութաիրավական ներգործության այնպիսի ժամանակավոր միջոցներ, որոնք չեզոքացնում են

---

տարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսբին ընդդեմ Հունաստանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40:

<sup>2</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թ. որոշումը:

վիճելի իրավիճակը մինչև դրանում լիարժեք իրավական որոշակիության հաստատումը, բացառում են գործին մասնակցող անձի ենթադրյալ իրավունքներին անդառնալի (անվերականգնելի) վնաս պատճառելու հավանականությունը:

Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Օրենսգրքի տվյալ նորմն ըստ էության կանխորոշում այն անձանց շրջանակը, որոնց նախաձեռնությամբ քննարկվում է հայցն ապահովելու անհրաժեշտությունը, դատավարության այն փուլերը, որոնց ընթացքում կարող է իրականացվել հայցի ապահովում, և այն փաստական հիմքերը, որոնց առկայության պարագայում ներկայացված հայցը ենթակա է ապահովման:

**Նախաձեռնող սուբյեկտները:** Տնօրինչականության սկզբունքի ուժով հայցի ապահովման նախաձեռնությամբ հաղես գալու իրավունքը վերապահվել է գործին մասնակցող անձանց: Ընդ որում՝ նպատակ հետապնդելով խուսափել հայցի ապահովմամբ պատճառած վնասների համար պատասխանատու սուբյեկտի վերաբերյալ հնարավոր հարցից՝ օրենսդիրը բացառել է գործը քննող դատարանի նախաձեռնությամբ հայցի ապահովման միջոցներ կիրառելու հնարավորությունը: Այս կանոնից դատավարական օրենքը նախատեսել է ընդամենը երկու բացառություն այն դեպքերի համար, երբ դատարանը գործը քննում է «ի պաշտոնե»:

Նախ՝ ընտանեկան վեճերով դատարանը, ելնելով երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից, կարող է իր նախաձեռնությամբ հայցի ապահովման կարգով գործին մասնակցող կամ այլ անձի արգելել կամ պարտավորեցնել՝ կատարելու

որոշակի գործողություններ (ՔԴՕ 203 հոդվ., մաս 3),

երկրորդ՝ Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ հատուկ հայցային վարույթի գործով դատարանը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ հայցի ապահովման կարգով արգելել պատասխանողին՝ փոխելու երեխայի բնակության վայրը մինչև գործով կայացվելիք վճռի օրինական ուժի մեջ մտնելը (206 հոդվ., մաս 2):

Գործնականում հայցի ապահովման միջնորդություն ներկայացնում են առավելապես հայցվորները և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք, որոնք տրամաբանորեն հետապնդում են իրենց օգտին դատական ակտ կայացնելու դեպքում այդ ակտի կատարման համար անհրաժեշտ երաշխիքներ ապահովելու նպատակ:

Միևնույն ժամանակ որոշ դեպքերում չի բացառվում պատասխանողի նախաձեռնությամբ հայցի ապահովում իրականացնելու հնարավորությունը: Մասնավորապես նման իրավիճակ հնարավոր է այն դեպքերում, երբ ներկայացվում է, օրինակ, ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող և հայցվոր ամուսնու տիրապետության ներքո գտնվող գույքը բաժանելու պահանջ: Տվյալ դեպքում հայցի ապահովման միջոցներ կիրառելու նախաձեռնությամբ հանդես եկող պատասխանողը ձգտում է բացառել հայցվորի տիրապետության ներքո գտնվող և իր հավակնությունների առարկա հանդիսացող գույքի հնարավոր սպառումը, ոչնչացումը, վիճակի հնարավոր վատթարացումը և այլն:

Հայցի ապահովման նախաձեռնությունը չի կարող ելնել վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանցից: Նկատի ունենալով այն իրողությունը, որ վերջիններս դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերության ենթադրյալ մասնակիցներ չեն, կայացվելիք դատական



ակտով նրանց համար ուղղակիորեն իրավունքներ և պարտականություններ սահմանվել չեն կարող, նրանք չեն կարող պահանջել օրինական ուժի մեջ մտած վճռի հարկադիր կատարում՝ օրենսդիրը բացառել է նաև հայցի ապահովում պահանջելու նրանց հնարավորությունը (ՔԴՕ 38 հոդվ., մաս 7):

**Դատավարության փուլերը:** ՔԴՕ 128-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդություն կարող է ներկայացվել բացառապես առաջին ատյանի դատարանում: Ընդ որում, համաձայն ՔԴՕ 130-րդ հոդվածի 1-ին մասի, այն կարող է ներկայացվել առաջին ատյանի դատարան հայցադիմումի հետ կամ մինչև գործով դատաքննության ավարտը (ներառյալ՝ գործի վարույթը կասեցնելուց հետո մինչև դրա վերսկսումն ընկած ժամանակահատվածում<sup>3</sup>): Այլ կերպ ասած՝ գործին մասնակցող անձը հայցի ապահովման նախաձեռնությամբ կարող է հանդես գալ գործի հարուցման, այն դատաքննության նախապատրաստելու, ինչպես նաև դատաքննության փուլերում<sup>4</sup>: Ընդհանուր կանոնի ուժով, եթե հայցի ապահովման մասին միջնորդությունը ներկայացվում է գործի դատաքննությունն ավարտվելուց հետո, այն ենթակա չէ քննարկման (ՔԴՕ 152 հոդվ., մաս 9)<sup>5</sup>: Բնականաբար, հայ-

---

<sup>3</sup> Տե՛ս ՔԴՕ 158-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>4</sup> Օրենսդիրը թույլատրելի է համարել նաև հայցի նախնական ապահովումը՝ դրան նվիրելով ՔԴՕ 137-րդ հոդվածը: Այդ մասին մանրամասն տե՛ս սույն գլխի 3-րդ պարագրաֆում:

<sup>5</sup> Ուշագրավ է, որ օրենսդիրը գործին մասնակցող անձին վերապահել է նաև վճռի կատարման ապահովման վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունք: Ըստ ՔԴՕ 195-րդ հոդվածի 1-ին մասի՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ վճռի կայացումից հետո մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը կիրառում է վճռի կատարման ապահովման միջոցներ: Հարկ է նկատել, որ հայցի ապահովման և վճռի կատարման ապահովման վերաբերյալ միջնորդությունները նույնական չեն, ուստի դատարանը, ելնելով տնօրինչականության սկզբունքից, չի կարող գործով դատաքննությունն ավարտվելուց հետո ներկայացված հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդության հիման վրա կիրառել վճռի կատարումն ապահովելուն ուղղված միջոցներ: Նման

ցի ապահովման միջնորդություն չի կարող ներկայացվել նաև գործի քննության հետագա փուլերում՝ գործով կայացված եզրափակիչ դատական ակտի վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ընթացքում:

**Հիմքերը:** Հայցի ապահովման միջոցներ կիրառելու հիմքերը սպառիչ թվարկված են ՔԴՕ 128-րդ հոդվածի առաջին մասում: Մասնավորապես դատարանը կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե առկա է իրական վտանգ, որ նման միջոցներ չձեռնարկելը կարող է՝

1. անհնարին դարձնել դատական ակտի կատարումը,
2. դժվարացնել դատական ակտի կատարումը,
3. հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության,
4. էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Ընդ որում, նման վտանգը կարող է ելնել պատասխանողից կամ այլ անձանցից, ինչպես նաև պայմանավորված լինել վիճելի իրավահարաբերության օբյեկտի բնույթով, ֆիզիկական կամ այլ հատկանիշներով:

**Հայցի ապահովման միջոցները** թվարկված են ՔԴՕ 129-րդ հոդվածի 1-ին մասում: Այդպիսիք են՝

1. պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը,
2. պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը,
3. այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը,

---

իրավիճակներում հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը պետք է թողնվի առանց քննարկման, այն ներկայացնող կողմը տեղեկացվի այդ մասին, իսկ վճռի կատարման ապահովումն իրականացվի համապատասխան միջնորդություն ներկայացվելու պարագայում:

4. պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելը,

5. գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում գույքի իրացումը կասեցնելը,

6. պատասխանողի մոտ գտնվող, հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը:

Ուշագրավ է, որ հայցի ապահովման միջոցների շրջանակը ՔԴՕ-ում սպառիչ թվարկված չէ: Գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանը կարող է կիրառել օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ: Նման միջոցներ նախատեսված են, օրինակ, Ընտանեկան օրենսգրքի 96-րդ հոդվածով, համաձայն որի՝ ալիմենտ բռնագանձելու գործով դատարանը կարող է ալիմենտ բռնագանձելու որոշում կայացնել մինչև ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ երեխաների համար ալիմենտ բռնագանձելիս՝ մինչև ալիմենտ բռնագանձելու մասին վճիռ կայացնելը: Հայցի ապահովման այլ միջոցներ են նախատեսված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 69-րդ հոդվածով, որը դատարանին իրավունք է վերապահում հայցի ապահովման կարգով արգելանք դնել ստեղծագործությունների, տվյալների բազաների, հնչյունագրերի կամ տեսագրությունների ենթադրվող նմանակված բոլոր օրինակների, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա, արգելել որոշակի գործողությունների կատարումը, անմիջականորեն կալանք դնելու ենթադրվող նմանակված բոլոր օրինակների, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա:

Օրենքը սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման **մի քանի միջոց**

(ՔԴՕ 129 հոդվ., մաս 2):

Հարկ է նշել, որ տնօրինչականության սկզբունքի ուժով կիրառման ենթակա ապահովման միջոցի կամ միջոցների շրջանակը որոշում է հայցի ապահովման նախաձեռնությամբ հանդես եկող սուբյեկտը, որի միջնորդությամբ դատարանը կաշկանդված է: Վերջինս չի կարող քննարկման առարկա դարձնել և կիրառել հայցի ապահովման այնպիսի միջոց, որի կիրառումը միջնորդության շրջանակներում չի հայցվել: Հայցի ապահովման միջնորդությունը քննարկելիս դատարանի խնդիրն է պարզել հայցվող միջոցի կամ միջոցների իրավաչափությունը, ինչի արդյունքում համապատասխան ապահովման միջոցը կիրառելու վերաբերյալ միջնորդությունը պետք է կա՛մ բավարարվի, կա՛մ մերժվի (իհարկե, նշվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ հայցի ապահովումը կարող է կատարվել դատարանի նախաձեռնությամբ):

Կոնկրետ հայցի ապահովման համար կիրառվող ապահովման միջոցների տեսակը և բովանդակությունը որոշելիս դատարանը պետք է հիմք ընդունի նաև **համաչափության սկզբունքը**: Ինչպես բխում է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածից, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն օրենքով սահմանված իրավաչափ նպատակին հասնելու համար: Նշված հիմնարար ու ելակետային գաղափարը հաշվի առնելով՝ օրենսդիրը ՔԴՕ 129-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է, որ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին:

Վճռաբեկ դատարանի բնորոշմամբ համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին

հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը: Համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի<sup>6</sup>:

Ըստ վճռաբեկ դատարանի՝ համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն: Ըստ այդմ՝ կոնկրետ պահանջի ապահովման նպատակով կարող են կիրառվել բացառապես այն ապահովման միջոցները, որոնք պիտանի, անհրաժեշտ և բավարար (չափավոր) են՝ կայացվելիք դատական ակտի կատարումը երաշխավորելու կամ իրավատիրոջն անդառնալի վնաս պատճառելու հավանականությունը բացառելու համար:

Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն **պիտանի**, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից դատարանը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել **անհրաժեշտը**, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որը, առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: **Չափավորությունը** ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը միևնույն ժամանակ պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև<sup>7</sup>:

---

<sup>6</sup> Տե՛ս վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թ. որոշումը:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կիրառվող ապահովման միջոցների համաչափությունը գնահատելիս յուրաքանչյուր դեպքում հարկ է հաշվի առնել ապահովման ենթակա հայցի տեսակը և առարկան, հայցագիրը, ձեռնարկված հայցի ապահովման եղանակը: Պետք է հաշվի առնվի՝ որքանո՞վ է պիտանի և անհրաժեշտ տվյալ հայցի ապահովման միջոցի կիրառումը նմանատիպ հայցապահանջներով, առկա՞ է արդյոք ողջամիտ հարաբերակցություն հայցագնի և ձեռնարկված հայցի ապահովման ծավալի միջև և այլն:

Գործնականում համաչափության սկզբունքի խախտում են դիտարկվում նաև այն դեպքերը, երբ հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման: Թերևս բացառություն են այն դեպքերը, երբ ընտանեկան վեճերով, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, դատարանը հայցի ապահովման կարգով գործին մասնակցող կամ այլ անձի արգելում կամ պարտավորեցնում է կատարել որոշակի գործողություններ, որոնք կարող են մինչև վեճի ըստ էության լուծումն առերևույթ հանգեցնել ներկայացված պահանջի փաստացի կատարման (օրինակ՝ սահմանում է երեխայի տեսակցության ժամանակավոր կարգ կամ երեխային ժամանակավորապես հանձնում է հայցվորի խնամքին, կամ պատասխանողին պարտավորեցնում է վճարել երեխայի ապրուստի միջոցներ և այլն):

Համաչափության պահանջի մասնավոր դրսևորումներ են սահմանված ՔԴՕ 129-րդ հոդվածի 4-րդ մասում, այն է՝ կիրառվող հայցի ապահովման միջոցը չպետք է հանգեցնի իրավաբանական անձի գործունեության իրականացման փաստացի անհնարինության կամ նրա գործունեության համար ստեղծի էական խոչընդոտներ կամ հանգեցնի իրավաբանական անձի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման: Բացի այդ՝

օրենքը սահմանում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի գնման գործընթացի կամ գնման պայմանագրի կատարման կասեցմանը:

**Հայցի ապահովման միջոցներ կիրառելու դատավարական կարգը** նախատեսված է ՔԴՕ 130-131-րդ հոդվածներով:

Ինչպես վերը նշվել է, հայցի ապահովման միջոցներ կարող են կիրառվել բացառապես գործին մասնակցող անձի միջնորդությամբ, որը կարող է ներկայացվել առաջին ատյանի դատարան հայցադիմումի հետ կամ մինչև գործով դատաքննության ավարտը:

Հատկանշական է, որ, ըստ ՔԴՕ 130-րդ հոդվածի 2-րդ մասի, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու համապատասխան հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին: Ընդ որում՝ եթե հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը չի համապատասխանում նշված պահանջներին, այն դատարանի կողմից չի քննվում, ինչի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը (ՔԴՕ 131 հոդվ., մ. 2), իսկ այն դեպքերում, երբ դատարանը միջնորդության քննության արդյունքում գալիս է եզրահանգման, որ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը համապատասխանաբար լրիվ կամ մասնակի մերժվում է (ՔԴՕ 131 հոդվ., մ. 4): Հետևում է, որ, ի տարբերություն նախկին օրենսդրության, գործող օրենսդրությունը կողմի համար սահմանել է հայցի ապահովման որոշակի հիմքեր վկայակոչելու և ապահովման այս կամ այն միջոցի կիրառման անհրաժեշտությունը պատճառաբանելու պահանջ՝ միաժամանակ ամրագրելով դատարանի

պարտականությունը ստուգելու հայցի ապահովման վկայակոչված հիմքերի առկայությունը:

Որպես կանոն՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումին կից կամ շարադրվում է հայցադիմումի եզրափակիչ մասում: Նման դեպքերում այն բավարարելու կամ մերժելու հարցը դատարանը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու հետ մեկտեղ ոչ ուշ, քան հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու համար սահմանված ժամկետում: Բնականաբար, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության չի առնվում և հայցադիմումի, դրան կից այլ փաստաթղթերի հետ մեկտեղ ուղարկվում (վերադարձվում) է հայցվորին (ՔԴՕ 126 հոդվ., մ. 2, 127 հոդվ., մ. 2): Այլ կերպ ասած՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննարկվում է այն պարագայում, երբ դատարանը ներկայացված հայցադիմումն ընդունում է վարույթ:

Ինչպես նշվել է վերը, հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել նաև գործի քննության հետագա փուլերում՝ մինչև դատաքննության ավարտը: Նման դեպքերում միջնորդությունը քննվում է ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը:

ՔԴՕ 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը քննում է **առանց դատական նիստի հրավիրելու**: Ավելին, հաշվի առնելով հայցի ապահովման ինստիտուտի դատավարական նշանակությունն ու հետապնդվող նպատակը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը քննում է՝ առանց տվյալ միջնորդության մասին գործին մասնակցող մյուս



անձանց ծանուցելու և դրա վերաբերյալ նրանց դիրքորոշումները լսելու՝ պահպանելով «գաղտնիության ռեժիմ»<sup>8</sup>:

Ասվածը, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը ներկայացնում է դատական նիստի ընթացքում, որին ներկա են գործին մասնակցող այլ անձինք: Ըստ ՔԴՕ 152-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատական նիստում գրավոր միջնորդություն ներկայացրած անձը պարտավոր է դատական նիստին ներկա գործին մասնակցող մյուս անձանց տրամադրել միջնորդության և դրան կից փաստաթղթերի պատճենները (տվյալ կանոնից որևէ բացառություն օրենսդիրը չի նախատեսել): Նման իրավիճակում հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը «գաղտնի ռեժիմով» քննելու անհրաժեշտությունն ինքնաբերաբար վերանում է, ուստի կիրառման ենթակա են դառնում ՔԴՕ 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-7-րդ կետերով սահմանված դրույթները, ըստ որոնց՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատական նիստի ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները և դիրքորոշումը, ինչպես նաև դիրքորոշում հայտնել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների և փաստարկների վերաբերյալ:

Հետևում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հայցի ապահովման նախաձեռնությամբ հանդես եկող սուբյեկտը, ելնելով

---

<sup>8</sup> Նման ռեժիմ պահպանելու նկատառումներից ելնելով՝ ՔԴՕ 122-րդ հոդվածի 2-րդ մասը հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած հայցվորին ազատել է հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականությունից: ՔԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկվում են պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո:

տնօրինչականության սկզբունքից, իր հայեցողությամբ է որոշում՝ հայցի ապահովման միջնորդությունը ներկայացնել դատական նիստերի միջև ընկած ժամանակահատվածում (դատական նիստից դուրս), թե՛ դատական նիստի ընթացքում: Կախված ընտրված մարտավարությունից, ըստ էության, կիրառվում են ներկայացված միջնորդության քննության տարբեր ընթացակարգեր: Առաջին դեպքում միջնորդությունը քննվում է առանց դատական նիստ հրավիրելու ու այդ մասին գործին մասնակցող մյուս անձանց ծանուցելու, իսկ երկրորդ դեպքում՝ վերջիններիս դիրքորոշումը դատական նիստում լսելուց հետո:

Բոլոր դեպքերում միջնորդության քննության արդյունքով դատարանը պետք է կայացնի հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) հայցի ապահովման միջոց կիրառելու մասին,
- 2) հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին,
- 3) հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին:

ՔԴՕ 131-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը լրիվ կամ մասնակի մերժվում է, եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը: Հետևում է, որ՝

ա) միջնորդությունը ենթակա է բավարարման ամբողջ ծավալով, եթե դրա հիմքում դրված փաստերի և վերջիններս հաստատող ապացույցների գնահատման արդյունքում դատարանը գալիս է եզրակացության, որ առկա է հայցի ապահովման միջոց կիրառելու համապատասխան հիմքը, և միջնորդության մեջ նշված ապահովման միջոցը համաչափ է ապահովվող պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին,

բ) եթե հայցի ապահովման վկայակոչված հիմքի առկայության պայմաններում միջնորդությունը չի համապատասխանում հա-

մաշափության պահանջին (օրինակ՝ միջնորդության մեջ նշված ապահովման միջոցների մի մասն անհրաժեշտ կամ պիտանի չէ հետապնդվող նպատակին հասնելու տեսանկյունից, առկա չէ ողջամիտ հարաբերակցություն պահանջի չափի և հայցի ապահովման հայցվող ծավալի միջև և այլն), ապա հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվում է այն մասով կամ չափով, որով համապատասխանում է նշված պահանջին՝ համապատասխանաբար մասնակի մերժվելով չբավարարվող մասով կամ չափով,

գ) միջնորդությունը ենթակա է մերժման ամբողջ ծավալով, եթե դրա հիմքում դրված փաստերի և վերջիններս հաստատող ապացույցների գնահատման արդյունքում դատարանը գալիս է եզրակացության, որ հայցի ապահովման միջոց կիրառելու համապատասխան հիմքն ի սպառ բացակայում է:

Օրենքը սահմանում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ դատարանի որոշումը ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրն ուղարկվում է միջնորդությունը ներկայացրած անձին (ՔԴՕ 131 հոդվ., մ. 5), որին վերապահվում է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու, ինչպես նաև հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին դատարանի որոշումը մերժման մասով վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք: Ընդ որում՝ վերաքննիչ դատարանի կողմից բողոքը բավարարվելու դեպքում հայցի ապահովման միջոցները կիրառվում են վերաքննիչ դատարանի որոշմամբ, որը, ի դեպ, այլևս բողոքարկման ենթակա չէ (ՔԴՕ 131 հոդվ., մ. 6):

Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը **կատարելու կարգը** սահմանված է ՔԴՕ 132-րդ հոդվածում: Ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցի ապահովման մասին դատարանի

որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (հարկադիր կատարողի որոշմամբ): Այդ կապակցությամբ ՔԴՕ 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման: Նշված գործողությունը դատարանը կատարում է իր նախաձեռնությամբ, և այդ կապակցությամբ գործին մասնակցող անձի դիմում կամ միջնորդություն չի պահանջվում:

Եթե դատարանի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց կիրառվել է որոշակի գործողություններ կատարելու արգելք (ՔԴՕ 129 հոդվ., մմ. 2-3), այսինքն՝ այնպիսի միջոց, որը չի ենթադրում պարտավոր անձի կողմից որոշակի գործողություններ կատարելու, հետևաբար, նաև նրա նկատմամբ ԴԱՀԿ ծառայության միջոցով հարկադրանք կիրառելու անհրաժեշտություն, դատարանը կարող է, առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումն անմիջականորեն ուղարկել կամ առձեռն հանձնել այն անձին, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը: Նման դեպքերում հայցի ապահովման միջոցը կիրառվում է ոչ թե հարկադիր կատարողի, այլ անմիջականորեն դատարանի որոշմամբ:

Ինչպես և ցանկացած դատական ակտ, հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումները պարտադիր են դրանց հասցեատերերի համար, ենթակա են կատարման, իսկ դրանց պահանջների չկատարումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության (ՔԴՕ 5 հոդվ., կկ. 5, 7): Տվյալ դեպքում օրենքը սահմանում է, որ եթե դատարանը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումն անմիջականորեն ուղարկել կամ առձեռն հանձնել է այն անձին, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը, դրանով նախատեսված արգելքները

խախտելու համար դատարանը կարող է նշանակել դատական տուգանք (ՔԴՕ 132 հոդվ., մ. 4)<sup>9</sup>:

Հայցի ապահովման միջոցների գործողության **տևողությունը** կախված է գործի քննության արդյունքներից:

*Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում* հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը (ՔԴՕ 136 հոդվ., մաս 1):

*Հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում* հայցի ապահովման միջոցները անհրաժեշտությունը վերանում է, ուստի դրանք պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը (ՔԴՕ 136 հոդվ., մաս 2):

*Հայցը մասնակիորեն բավարարվելու դեպքում* հայցի ապահովման միջոցների պահպանման հարցը մեծապես կախված է գործի հանգամանքներից: Բնականաբար, եթե ապահովման միջոցն ուղղված է, օրինակ, բացառապես այն պահանջի ապահովմանը, որը դատարանի վճռով մերժվել է, դատարանը վճռով պետք է ամբողջությամբ վերացնի կիրառված ապահովման միջոցը: Այն դեպքերում, երբ գործով կիրառվել են հայցի ապահովման մի քանի միջոցներ, որոնցից մեկն ուղղված է բավարարված, իսկ մյուսը՝ մերժված պահանջի ապահովմանը, վերջինիս կապակցությամբ կիրառված ապահովման միջոցը ենթակա է վերացման, քանի որ այլևս բացակայում է այդ պահանջի կատարումն ապահովելու անհրաժեշտությունը: Նշված նկատառումներից ելնելով՝ ՔԴՕ 136-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ հայցը մաս-

---

<sup>9</sup> Դատական տուգանք նշանակելու ընդհանուր կարգը և պայմանները սահմանվում են ՔԴՕ 153-րդ և 155-րդ հոդվածներով: Դատարանի կողմից հայցի ապահովման կարգով սահմանված արգելքների պահպանումն ապահովված է նաև ՔԴՕ 138-րդ հոդվածի 3-րդ մասով, որը հայցի ապահովման միջնորդությամբ հանդես եկած գործին մասնակցող անձին իրավունք է վերապահում հայցադիմում ներկայացնել նույն դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

նակիրորեն բավարարվելու դեպքում դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, պետք է լուծի հայցի ապահովման միջոցներն ամբողջությամբ կամ մասնակիրորեն վերացնելու հարցը:

*Գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքերում* հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերը նշված բոլոր դեպքերում եզրափակիչ դատական ակտում, ի թիվս այլ հարցերի, դատարանը պետք է եզրահանգումներ կատարի կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին (ՔԴՕ 192 հոդվ., մաս 5, կետ 3, 181 հոդվ., մաս 1, 183 հոդվ., մաս 3): Ընդ որում՝ այդ հարցում դատարանի թերացումը կարող է վերացվել նույն դատարանի կողմից գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու միջոցով (ՔԴՕ 196 հոդվ., մաս 1, կետ 4, մաս 10)<sup>10</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ հայցը մերժելու, այն մասնակիրորեն բավարարվելու, գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին եզրափակիչ դատական ակտ կայացվելն ինքնաբերաբար չի հանգեցնում կիրառված հայցի ապահովման միջոցի լրիվ կամ մասնակի վերացման: Կիրառված ապահովման միջոցը վերացնելու անվերապահ պայմանը կայացված եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելն է: Հետևաբար, եթե մինչև համապատասխան եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի ավարտը դրա դեմ բերվում է վերաքննիչ բողոք, գործով կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանվում է:

---

<sup>10</sup> Հատկանշական է, որ ի տարբերություն այլ հիմքերով լրացուցիչ վճիռ (որոշում) կայացնելու դեպքերի՝ հայցի ապահովման միջոցները վերացնելու հարցը դատարանը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու:

## **§2. Հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության դատավարական միջոցները**

Հայցի ապահովման միջոցներ կիրառելը կարող է սահմանափակել այն անձի իրավունքները, որի նկատմամբ այդ միջոցները կիրառվել են, ստեղծել նրա համար որոշակի անհարմարություններ, վտանգել նրա օրինական շահերը կամ առաջացնել անհարկի գույքային վնաս: Բացի այդ՝ գործը հարուցելուց հետո կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ կիրառված հայցի ապահովման միջոցներն այլևս չեն բխում հայցվորի շահերից կամ հանգամանքների բերումով դարձել են ոչ պիտանի: Ուստի օրենսդիրը նախատեսել է հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության մի շարք դատավարական միջոցներ:

Այդպիսիք են՝ հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մեկ այլ միջոցով, հայցի ապահովման միջոցի ձևափոխումը, հայցի ապահովման միջոցի վերացումը, հակընդդեմ ապահովումը, հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման հետ կապված վնասների հատուցումը, ինչպես նաև հայցի ապահովման հետ կապված որոշ միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը:

Օրենքը թույլատրում է գործին մասնակցող անձի միջնորդությամբ հայցի ապահովման կիրառված միջոցը **փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխել այն**: Հարկ է նկատի ունենալ, որ հայցի ապահովման միջոցի **փոխարինումը** ենթադրում է սկզբնապես կիրառված մեկ միջոցի փոխարեն օրենքով նախատեսված մեկ այլ միջոցի կիրառում: Հայցի ապահովման կիրառված միջոցի փոխարինում է տեղի ունենում մեկ այլ միջոցով, օրինակ, այն դեպքում, երբ քաղաքաշինության մարմիններին ուղղված շինարարության թույլտվություն տալու արգելքը (ՔԴՕ 129

հողվ., մաս 1, կետ 3) փոխարինվում է պատասխանողին ուղղված վիճելի շինարարական աշխատանքները շարունակելու արգելքով (ՔԴՕ 129 հողվ., մաս 1, կետ 2) կամ երեխային հայցվորի խնամքին հանձնելուն պարտավորեցնելը (ՔԴՕ 129 հողվ., մաս 1, կետ 4) փոխարինվում է հայցվորի համար երեխայի տեսակցության ժամեր սահմանելով (ՔԴՕ 129 հողվ., մաս 1, կետ 7) և այլն: Ուշագրավ է, որ հայցի ապահովման կիրառված միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելիս համապատասխան միջոցի ընտրությունը կատարվում է ՔԴՕ 129-րդ հոդվածով կամ օրենքով նախատեսված այլ միջոցների կազմից՝ պահպանելով ապահովման միջոցի համարժեքության սկզբունքը:

Նույն սկզբունքի պահպանմամբ էլ կատարվում է հայցի ապահովման միջոցի **ձևափոխումը**: Վերջինս դատավարական գործողություն է, որի արդյունքում միևնույն ապահովման միջոցի շրջանակներում դատարանը սահմանում է հայցի ապահովման՝ սկզբնականից որոշակիորեն տարբերվող եղանակ: Հայցի ապահովման կիրառված միջոցի (դրա չափի, բնույթի, բովանդակության) ձևափոխում է տեղի ունենում, օրինակ, այն դեպքում, երբ հայցապահանջի նվազեցման կամ ավելացման արդյունքում փոփոխվում է պատասխանողի գույքի վրա դրված արգելանքի չափը (ՔԴՕ 129 հողվ., մաս 1, կետ 1) կամ փոփոխվում են երեխայի տեսակցության համար սահմանված ժամերը կամ վճարման ենթակա ապրուստի միջոցների չափը (ՔԴՕ 129 հողվ., մաս 1, կետ 7): Ի տարբերություն հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու՝ հայցի ապահովման միջոցը ձևափոխելիս դատարանը նախապես կիրառված միջոցի փոխարեն օրենքով նախատեսված այլ միջոց չի կիրառում, այլ որոշակի փոփոխությունների է ենթարկում արդեն կիրառված ապահովման միջոցը՝ այն համապատասխանեցնելով համարժեքության սկզբունքին (դարձնելով պիտանի, անհրաժեշտ և չափավոր):



Հարկ է նկատի ունենալ, որ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելը կամ ձևափոխելը զուտ դատավարական գործողություններ են, որոնք կատարվում են բացառապես դատարանի որոշմամբ: Այս առումով այդպիսի փոխարինում կամ ձևափոխում տեղի չի ունենում հայցի ապահովման որոշման հարկադիր կատարման ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացվող այն որոշումներով, որոնցով, օրինակ, պարտապանի միջնորդությամբ արգելանքը հանվում է դրամական միջոցներ չհամարվող գույքից և դրվում է պարտապանի անունով բացված բանկային հաշվին մուտքագրված դրամական միջոցների վրա, կամ պարտապանի բանկային հաշվի վրա դրված արգելանքը հանվում է հարկադիր կատարման դեպոզիտ հաշվին հայցագնի չափով գումար մուծելու հիմքով, կամ պարտապանին պատկանող անշարժ գույքն արգելանքից հանվում է, փոխարենն արգելանք է դրվում նրան պատկանող շարժական գույքի վրա (ԴԱՀԿ մասին օրենքի 44.3 հոդվ.): Բոլոր նշված գործողությունները կատարվում են օրենքով նախատեսված մեկ կոնկրետ ապահովման միջոց («հայցագնի չափով պատասխանողին պատկանող գույքի վրա արգելանք դնելը») կիրառելու մասին որոշման կատարման կապակցությամբ՝ որևէ կերպ չազդելով դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցի չափի, բնույթի կամ բովանդակության վրա:

Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու հարցը քննվում է դատական նիստում, որի արդյունքներով դատական ակտը պետք է կայացվի միջնորդությունն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում (ՔԴՕ 133 հոդվ., մաս 2, 134 հոդվ. ., մաս 3): Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու մասին դատարանի որոշումը կատարվում է ընդհանուր կարգով:

***Հայցի ապահովման միջոցի վերացումը այն անձի շահերի***

պաշտպանության դատավարական միջոց է, որի նկատմամբ կիրառվել է համապատասխան ապահովման միջոցը:

ՔԴՕ 134 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ընթացքում հայցի ապահովման միջոցի վերացումը կարող է իրականացվել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատարանի նախաձեռնությամբ:

Հայցի ապահովման կիրառված միջոցը լրիվ կամ մասնակիորեն վերացնելու հիմքերը նախատեսված են ՔԴՕ 134-րդ հոդվածի 2-րդ մասով: Այդպիսիք են՝

1) հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի բացակայությունը,

2) հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու վերաբերյալ գործին մասնակցող այն անձի գրավոր համաձայնությունը, որի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց,

3) օրենքով ուղղակիորեն նախատեսված այլ դեպքերում:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ հայցի ապահովման կիրառված միջոցի վերացման արդյունքում կարող է վնաս պատճառվել այն անձին, հօգուտ որի կիրառվել է հայցի ապահովումը, իսկ նրա իրավունքների դատական պաշտպանությունն էլ դառնալ երևութական, քանի որ նշված դատավարական գործողության կատարման արդյունքում ըստ էության վերանում է հայտարարված նյութափրավական պահանջն ապագայում իրացնելու իրական հնարավորությունը, դատարանի նախաձեռնությամբ հայցի ապահովումը վերացնելու հնարավորությունն օրենսդրի կողմից խիստ սահմանափակվել է: Մասնավորապես սահմանվել է, որ հայցի ապահովման միջոցը դատարանի նախաձեռնությամբ կարող է վերացվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում: Նման դեպքեր նախատեսված են 136-րդ հոդվածի 2-3-րդ մասե-

րով, 181-րդ հոդվածի 1-ին մասով և 183-րդ հոդվածի 3-րդ մասով: Բոլոր այլ դեպքերում հայցի ապահովումը վերացնելու հարցը տնօրինչականության սկզբունքի ուժով կարող է քննարկման առարկա դառնալ բացառապես գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Ընդ որում՝ նման միջնորդությամբ կարող է հանդես գալ ինչպես այն անձը, որի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց (երբ գտնում է, որ բացակայում է հայցն ապահովելու անհրաժեշտությունը), այնպես էլ այն անձը, հոգուտ որի կիրառվել է համապատասխան ապահովման միջոցը (երբ գտնում է, որ կիրառված միջոցն այլևս չի բխում իր շահերից կամ հանգամանքների բերումով այլևս անհրաժեշտ չէ):

Մինևույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել բացառապես հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ (ՔԴՕ 136 հոդվ., մաս 1): Քանի որ նման վճռահատության արդյունքում հայցի ապահովման միջոցը պահպանվում է մինչև վճռի կատարումը, օրենսդիրը, ըստ էության, բացառել է դատավարության տվյալ փուլում հայցի ապահովումը վերացնելու միջնորդությամբ դատարանին դիմելու այլ անձանց հնարավորությունը:

Նկատի ունենալով հայցի ապահովման միջոցը վերացնելու հիմքերի առանձնահատկությունները՝ օրենսդիրը սահմանել է հայցի ապահովման միջոցը վերացնելու տարբերակված դատավարական կարգեր:

Բոլոր այն դեպքերում, երբ առկա է հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու վերաբերյալ գործին մասնակցող անձանց համաձայնությունը կամ հայցի ապահովումն օրենքի ուժով ենթակա է վերացման դատարանի նախաձեռնությամբ, ՔԴՕ 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, հարցը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Ընդ որում՝ նշված դեպքերում

հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը դատարանը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

Եթե գործին մասնակցող անձը ներկայացրել է հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդություն այն պատճառաբանությամբ, որ բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը, այդպիսի միջնորդությունը կարող է քննվել բացառապես դատական նիստում՝ ապահովվելով կողմերի մրցակցային իրավունքների իրացման լիարժեք հնարավորությունը: Միջնորդության քննության արդյունքներով դատական ակտը պետք է կայացվի միջնորդությունը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

**Հակընդդեմ ապահովման** ինստիտուտն ուղղված է գործին մասնակցող այն անձի շահերի պաշտպանությանը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց: Եթե հայցի ապահովման ինստիտուտը հանդես է գալիս որպես հայցվորի շահերի պաշտպանության դատավարական միջոց, ապա հակընդդեմ ապահովումը կոչված է հավասարակշռելու պատասխանողի՝ հայցի դեմ արդյունավետ պաշտպանվելու հնարավորությունը:

Եվրոպական մի շարք երկրների քաղաքացիական դատավարության օրենսդրություններ հայցի ապահովման միջոցներ կիրառելու կարևոր նախապայման են համարում ոչ միայն հայցի ապահովման հիմքերի առկայությունը, այլ նաև այդպիսի միջնորդությամբ հանդես եկող անձի կողմից «երաշխիքային գրավի» տրամադրումը, որի հաշվին կարող են հատուցվել հայցի ապահովման արդյունքում պատասխանողին պատճառված հնարավոր վնասներն այն դեպքերում, երբ ներկայացված հայցը վերջնականապես մերժվում է:

ՀՀ ՔԴՕ-ն նման իմպերատիվ պահանջ սահմանել է բացառապես հայցի նախնական ապահովման միջնորդություն ներկայացնող անձանց համար (այդ մասին մանրամասն կխոսվի հա-

ջորդ պարագրաֆում): Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն իրողությունը, որ հայցի ապահովման միջոցների կիրառման արդյունքում դատարանի որոշմամբ սահմանված սահմանափակումների, արգելքների կամ հրամայականների հասցեատերը, որի «մեղավորությունը» դատավարության տվյալ փուլում դեռևս չի հաստատվել, կարող է կրել շոշափելի գույքային վնասներ, օրենսդիրը նախատեսել է նման վնասները հատուցելու պահանջով գործը քննած դատարան հայց ներկայացնելու վերջինիս իրավունքը (ՔԴՕ 138 հոդվ.), իսկ դրա արդյունավետ դատական պաշտպանությունը երաշխավորելու նպատակով սահմանել է, որ գործին մասնակցող անձը, ում դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, կարող է նույն վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացնել իր հնարավոր վնասների հատուցման համար հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձից դրամական ապահովում (հակընդդեմ ապահովում) պահանջելու վերաբերյալ (ՔԴՕ 135 հոդվ., մաս 1):

Ըստ ՔԴՕ 135-րդ հոդվածի 5-րդ մասի՝ հակընդդեմ ապահովման միջնորդությունը բավարարվելու դեպքում հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձը պարտավոր է հակընդդեմ ապահովման գումարը փոխանցել դատարանի դեպոզիտ այդ մասին որոշումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում և դատարանին ներկայացնել փոխանցման փաստը հավաստող ապացույց: Հակընդդեմ ապահովման գումարը վճարելու պարտականությունը չկատարելու կամ դրա վճարման փաստը հավաստող ապացույցը դատարան չներկայացնելու դեպքում դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ առանց դատական նիստ հրավիրելու եռօրյա ժամկետում որոշում է կայացնում հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին (ՔԴՕ 135 հոդվ., մաս 6):

Հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնոր-

դությունը կարող է ներկայացվել ինչպես գործը դատաքննության նախապատրաստելու, այնպես էլ գործի դատաքննության ընթացքում: Բոլոր դեպքերում այն ենթակա է քննության և լուծման դատական նիստում, միջնորդությունը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի միջնորդության հիմնավորվածությունը, այդ թվում՝ հայցի ապահովման տվյալ միջոցի կիրառման արդյունքում վնասներ կրելու հավանականությունը և հնարավոր վնասի չափը: Բնականաբար, նշված փաստերի գնահատումը կարող է իրականացվել դատական նիստում՝ դրանք հիմնավորվող ապացույցների հետազոտման հիման վրա:

Օրենքը կարգավորել է նաև հակընդդեմ ապահովման գումարն այն տրամադրած անձին վերադարձնելու հիմքերն ու կարգը (ՔԴՕ 135 հոդվ, մմ. 7-9): Մասնավորապես սահմանվել է, որ հայցն ամբողջությամբ բավարարելու մասին դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը հակընդդեմ ապահովում տրամադրած անձի միջնորդության հիման վրա որոշում է կայացնում հակընդդեմ ապահովման գումարը նրան վերադարձնելու մասին:

Հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժելու, գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատական ակտ կայացվելու դեպքում հակընդդեմ ապահովումը պահպանվում է, սակայն օրենքը հնարավորություն է տալիս հակընդդեմ ապահովում տրամադրած անձին դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամիսը լրանալուց հետո դիմել դատարան՝ հակընդդեմ ապահովման գումարը վերադարձնելու միջնորդությամբ, եթե սահմանված ժամկետում չի ներկայացվել հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման

հայց: Ուշագրավ է, որ քննարկվող դեպքերում հակընդդեմ ապահովումը կարող է վերադարձվել բացառապես այն տրամադրած անձի միջնորդությամբ: Նման միջնորդություն չներկայացվելու պարագայում հակընդդեմ ապահովումը պահպանվում է, չի կարող վերացվել դատարանի նախաձեռնությամբ և հանդես է գալիս որպես հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման հնարավոր պահանջի ապահովում: Իսկ այն դեպքերում, երբ հակընդդեմ ապահովում տրամադրած անձի միջնորդությունը ներկայացվում է հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման հայցը ներկայացնելուց հետո, այն ենթակա է բավարարման՝ ներկայացված հայցադիմումում նշված հայցագինը գերազանցող գումարի մասով:

#### **Հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցումը**

ևս այն անձի շահերի պաշտպանության դատավարական միջոց է, որի նկատմամբ կիրառվել է համապատասխան ապահովման միջոցը:

ՔԴՕ 138-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կամ այլ անձը, ում դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնել նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է այն հիմքով, որ առկա չեն հայց հարուցելու իրավունքի նախադրյալները կամ հայցվորը հրաժարվել է պահանջից:

Հարկ է նկատի ունենալ, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման դեպքում, ի տարբերություն վնասի հատուցման ընդհանուր պայմանների, վնաս պատճառող արարքի

անօրինական լինելու պայմանը ենթակա չէ քննարկման, քանի որ պատճառոված վնասը հետևանք է դատական ակտի կատարման: Այս առումով պետք է արձանագրել, որ հայցի ապահովմամբ պատճառոված վնասի հատուցման ինստիտուտը համակարգային կապի մեջ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ օրինաչափ գործողություններով պատճառոված վնասը հատուցվում է օրենքով նախատեսված դեպքերում:

Հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության դատավարական կարևոր միջոցներից է հայցի ապահովման հետ կապված որոշ դատական ակտերի **բողոքարկումը**:

ՔԴՕ-ը բողոքարկելի միջանկյալ դատական ակտերի թվին է դասել՝

1) հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու,

2) հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու (ՔԴՕ 131 հոդվ., մաս 6),

3) հայցի ապահովման միջոցն այն կիրառելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ լրիվ կամ մասնակի վերացնելու (ՔԴՕ 134 հոդվ., մաս 6),

4) հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու (ՔԴՕ 135 հոդվ., մաս 4) մասին որոշումները:

Ուշագրավ է, որ բողոքարկման հնարավորություն նախատեսվել է հայցի ապահովման կապակցությամբ դատարանի կայացրած այն որոշումների համար, որոնց արդյունքում էական վտանգի տակ կարող է հայտնվել գործի քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտի կատարումը կամ անդառնալի վնաս պատճառվել միջնորդությունը ներկայացրած անձին, և նա չունի իր շահերի պաշտպանության այլընտրանք: Որպես հե-



տւանք՝ օրենսդիրը չի սահմանել, օրինակ, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն՝ փոխարենը նախատեսելով հայցի ապահովման արդյունքում հնարավոր վնասներ կրող գործին մասնակցող կամ չմասնակցող անձի շահերի պաշտպանության այլ դատավարական միջոցներ (հայցի ապահովման միջոցի վերացում, փոխարինում այլ միջոցով, ձևափոխում, հակընդդեմ ապահովում, վնասների հատուցում):

### **§3. Հայցի նախնական ապահովումը**

**Հասկացությունը և նշանակությունը:** ՔԴՕ 137-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն անձի դիմումով կարող է կիրառել հայցի նախնական ապահովման միջոցներ, որոնք ուղղված են դիմողի կողմից հարուցվելիք հայցի ապահովմանը:

Հայցի նախնական ապահովման ինստիտուտը գործող ՔԴՕ-ի նորոյթներից է: Այն կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ իր իրավունքների դատական պաշտպանության դիմելու մտադրություն ունեցող անձն ինչ-ինչ պատճառներով զրկված է տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու փաստական կան իրավական հնարավորությունից և հիմքեր ունի ենթադրելու, որ իր պահանջի նախնական ապահովման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել ապագայում կայացվելիք դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Հայցադիմում ներկայացնելու անհնարինությունը կարող է բազմաբնույթ փաստական հանգամանքների հետևանք լինել (ժամանակի սղություն, փաստաբանի հետ պայմանագիր կնքելու կամ

ապացույցներ հավաքելու անհրաժեշտություն և այլն): Ինչ վերաբերում է հայցադիմում ներկայացնելու իրավական անհնարինությանը, ապա որպես այդպիսին հարկ է դիտարկել ԲԴՕ-ի 3-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպված դրույթը, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման արտադատական կարգ, վեճը կարող է հանձնվել առաջին ատյանի դատարանի քննությանն այն արտադատական կարգով լուծելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողությունները ձեռնարկելու օրվանից երեսուն օրացուցային օր հետո, եթե այլ կարգ կամ ժամկետ սահմանված չէ օրենքով կամ պայմանագրով: Ուշագրավ է, որ ԲԴՕ 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը նախատեսում է դատարանի պարտականությունը վերադարձնելու հայցադիմումն այն դեպքերում, երբ հայցվորը չի պահպանել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը:

Նման կարգավորման պայմաններում նախնական ապահովման ինստիտուտի նշանակությունն էապես մեծանում է՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ նախնական պաշտպանական միջոցներ կիրառելու հնարավորության բացակայության պայմաններում, օրինակ, սկսված հաշտարարական գործընթացի մասին իրազեկված կամ պահանջատիրող նախապահանջը ստացած պարտապանը նախքան իրավատիրոջ (պարտատիրոջ) կողմից դատարան դիմելը կարող է կատարել այնպիսի գործողություններ, որոնք լուրջ կասկածի տակ կդնեն վեճը դատական կարգով ըստ էության լուծող ապագա դատական ակտի կատարումը (օրինակ՝ օտարել իրեն պատկանող գույքը, թաքցնել դրամական միջոցները և այլն):

Նախնական ապահովման ինստիտուտը թույլ է տալիս չեզոքացնել նման ռիսկերը, կոնկրետ միջոցներով ապահովել պահանջի իրավունքը, որից հետո միայն ձեռնարկել վեճն արտադատական կարգով լուծելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողություններ՝ պարտավոր անձին զրկելով այնպիսի գործողություններ կատարելու հնարավորությունից, որոնք կարող են անհնարին դարձնել կամ դժվարացնել ապագայում կայացվելիք դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Միևնույն ժամանակ հայցի նախնական ապահովման ինստիտուտը բավականին լուրջ նշանակություն ունի քաղաքացիական վեճերն արտադատական կարգով լուծելուն խթանելու և արտադատական կարգով լուծման հավանականություն պարունակող վեճերով դատարաններին չծանրաբեռնելու առումով: Քննարկվող ինստիտուտը կիրառող երկրների փորձը ցույց է տալիս, որ նախնական պաշտպանական միջոցների կիրառումն էապես բարձրացնում է արտադատական կարգով վեճերի լուծման գրեթե բոլոր ընթացակարգերի արդյունավետությունը:

**Դատավարական կարգը:** Ըստ ՔԴՕ 137-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է հայցի ապահովման ընդհանուր կանոններով, այն հատուկ կանոնների (առանձնահատկությունների) հաշվառմամբ, որոնք սահմանված են հայցի նախնական ապահովման համար: Նշված առանձնահատկությունները վերաբերում են հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ հարցի ընդդատությանը, դիմումին և դրան կցվող փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, դիմումի քննության ժամկետներին,

հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո դիմողի կողմից կատարման ենթակա գործողություններին, դրանք կատարելու կամ չկատարելու հետևանքներին:

ՔԴՕ 137-րդ հոդվածի 3-րդ մասը հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների համար սահմանում է **ընդդատության** հատուկ կանոն, այն է՝ դիմումը ներկայացվում է դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան:

Ի լրումն հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումին ներկայացվող պահանջների՝ ՔԴՕ 137-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ **դիմումում պետք է նշվեն՝**

1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,

2) դիմողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), դիմող քաղաքացու անձնագրային տվյալները, դիմող իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, իսկ եթե հայցը ներկայացվել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձի կողմից, նաև այդ անձի անունը, պաշտոնը,

3) պարտապանի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն,

4) հարուցվելիք հայցի առարկան, որի կապակցությամբ պետք է կիրառվի հայցի նախնական ապահովում,

5) տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու անհնարինության մասին հիմնավորումներ,

6) դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ **դիմումին կցվում են՝**

1) դիմողի անձը կամ պետական գրանցման փաստը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը,

3) դիմումում որպես պարտապան նշված անձի նկատմամբ դիմողի պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերը,

4) տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու անհնարինության վերաբերյալ ապացույցներ,

5) հարուցվելիք հայցի հայցագնի, իսկ ոչ դրամական պահանջների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի առնվազն 500-ապատիկի չափով պարտապանի հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու փաստը հավաստող փաստաթուղթը (ՔԴՕ 137 հոդվ., մաս 5):

Դատարանը հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու մասին դիմումը քննում է **առանց դատական նիստ հրավիրելու** այն ստանալուց հետո՝ **եռօրյա ժամկետում**:

Եթե հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում ներկայացվող պահանջները կամ դատարանը գտնում է, որ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը ենթակա է մերժման, դիմումը՝ կից փաստաթղթերի հետ մեկտեղ դատարանի

որոշմամբ վերադարձվում են այն ներկայացնող անձին (ՔԴՕ 137 հոդվ., մաս 7), որը զրկված չէ նշված թերությունները վերացնելուց հետո այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունից:

Եթե հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը և դրան կից փաստաթղթերը բավարարում են ներկայացվող պահանջները, և դատարանը գալիս է եզրահանգման, որ այն հիմնավոր է (առկա է հայցի ապահովման հիմքը, հայցվող ապահովման միջոցը համապատասխանում է համաչափության պահանջներին), կայացվում է որոշում՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ:

ՔԴՕ 137-րդ հոդվածի և հայցի ապահովման ինստիտուտի համադրված վերլուծությունից բխում է, որ դատարանն ընդհանուր կանոնի ուժով կարող է հայցի նախնական ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարել մասնակիորեն, եթե այն չի համապատասխանում համաչափության պահանջին, կամ մերժել՝ ապագայում հարուցվելիք հայցի ապահովման վկայակոչված հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

*Հայցի նախնական ապահովման վերաբերյալ կանոնները սահմանում են հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմումը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու դեպքում դիմողի կողմից կատարման ենթակա գործողությունների շրջանակը, դրանք չկատարելու և կատարելու դատավարական հետևանքները:*

Մասնավորապես սահմանվում է, որ այն դեպքերում, երբ օրենքով կամ կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճը կարգավորելու արտադատական կարգ, դիմողը պարտավոր է կատարել հետևյալ գործողությունները:

Առաջին՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառե-

լու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում դիմողը պետք է կատարի վեճն արտադատական կարգով կարգավորելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողությունները (օրինակ՝ սկսի հաշտարարության գործընթաց, ներկայացնի նախապահանջ և այլն)՝ դրանք կատարելու փաստը հաստատող ապացույցներ ներկայացնելով դատարանին:

Երկրորդ՝ վեճն արտադատական կարգով լուծելու համար օրենքով կամ պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում դիմողը պետք է հայցադիմում ներկայացնի դատարան՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումում նշված անձի դեմ և պահանջով:

Եթե հայցի նախնական ապահովման միջոցները կիրառվել են այնպիսի պայմաններում, երբ օրենքով կամ կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված չէ մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճը կարգավորելու արտադատական կարգ, հայցադիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողը ստացել է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումը:

Վեճն արտադատական կարգով կարգավորելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողությունները կատարելու փաստը հաստատող ապացույցները ներկայացնելու պարտականությունը չկատարելը, ինչպես նաև՝ սահմանված ժամկետում դիմումում նշված պահանջով ընդդեմ պարտապանի հայցադիմում չներկայացնելն օրենքը դիտարկում է որպես հայցի նախնական ապահովման միջոցները շահագրգիռ անձի դիմումով **վերացնելու** հիմք: Հայցի նախնական ապահովումը ենթակա է

վերացման նաև այն դեպքերում, երբ պարտապանը ներկայացնում է դիմողի պահանջը կատարելու փաստը հաստատող գրավոր ապացույցներ (ՔԴՕ 137 հոդվ., մաս 11): Ընդ որում՝ օրենքն ուղղակիորեն սահմանում է, որ հայցի նախնական ապահովման միջոցները վերացնելու մասին դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման (ՔԴՕ 137 հոդվ., մաս 12):

Ուշագրավ է, որ հայցի նախնական ապահովման ինստիտուտի հնարավոր չարաշահումների դեմ պայքարելու և պարտապանի շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ օրենքը վերջինիս համար սահմանել է հայցի նախնական ապահովմամբ պատճառված վնասների հատուցման պահանջով նույն դատարան դիմելու հնարավորություն նաև այն դեպքերում, երբ սահմանված ժամկետում չի ներկայացվել հայցադիմում այն պահանջով, որի կապակցությամբ կիրառվել է նախնական ապահովման միջոց (ՔԴՕ 138 հոդվ., մաս 2):

Ուշագրավ է, որ ՔԴՕ 137-րդ հոդվածի 14-րդ մասը հնարավոր է համարում նաև հայցի նախնական ապահովման մեկ միջոցի փոխարինումը մեկ այլ միջոցով, դրա ձևափոխումը, ինչպես նաև՝ հայցի հակընդդեմ ապահովման վերաբերյալ միջնորդությունների ներկայացումը, նախքան դիմողի կողմից սահմանված ժամկետում հայցադիմում ներկայացնելը: Նման միջնորդությունը պետք է քննվեն դատարանում ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում՝ ընդհանուր կանոնների պահպանմամբ:

Դիմողի կողմից սահմանված ժամկետում հայցադիմում ներկայացնելու դեպքում կիրառված հայցի նախնական ապահովման միջոցներն օրենքի ուժով գործում են որպես հայցի ապահովման միջոցներ:



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵՂՐՅԱՆ**

**ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(դասախոսություն)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումժյանի

Չափսը՝ 60x84 1/16:

Տպ. մամուլը՝ 2.5:

ԵՊՀ հրատարակչություն  
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)